




ՆԵՐՍԵՍ Ծ. ՎՐԻ. ՊՈԶԱՊԱԼՅԱՆ

(Տիսուշ Հոգևոր Ճեմարանի)

ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՎԱՆՑԻ

(Կենսագրական հակիրճ ակնարկ)

Հայ տպագրության պատմության էջերում, երախտարժան անձնավորությունների առաջին շարքում, անվարան կարելի է զետեղել Ոսկան Երևանցի վարդապետի անունը։ Նա հայ Աստվածաշնչի անդրանիկ հրատարակչին է։ Զուգահեռ նմանություն կարելի է գտնել Մովսես Մարգարեի, Ս. Մեսրոպի և Ոսկանի միջև։ Մովսես Սինայի բարձունքից իր ժողովուրդի սեփականությունը դարձրեց երկնային օրենքի տախտակները և այդպիսով երբայական գրականությունն։ Ս. Մեսրոպ օրենքի և կյանքի դիրքը հայացրեց և Ոսկան վարդապետ՝ Աստվածաշունչը ժողովուրդի սեփականությունը դարձրեց, և այդպիսով հայ գրի սերը տարածեց հայ ժողովուրդի ծոցում։

Աստվածաշնչի տպագրության գործում կան բազմաթիվ երախտավորներ, նախ՝ երանաշնորհ՝ Հակոբ Դ կաթողիկոս Զուղայեցի՝ գործի տեսիլքն ունեցողը, երկրորդ՝ Մատթեոս սարակավազ Ծարեցի, որպես ձեռնարկող, և երրորդ՝ Ոսկան վարդապետ Երևանցի, տեսիլքն իրականացնողն։ Մեզ համար գրեթե աներևակայելի և անըմբռնելի են դժվարություններն ու խոչընդոտները, որոնք ծառացան վերոհիշյալ վերջին զույգ երախտավորների առաջ հատկապես։

Ահա 300 տարիներ են անցել Աստվածաշնչի հայերեն անդրանիկ տպագրության օ-

րից, բայց այդ գործը եղել ու մնում է մեզ համար կոթողային և անգնահատելի։ Ամեն հայ պարտի խոնարհվել մեծ երախտավորների երկնային ներշնչումով կատարած գործի առջև։

Ոսկանի միջև էջմիածին գալը։ Ոսկան ծնվել է 1614 թվականին Սպահանում, Ղիճենց տոհմում։ Ծնողները եղել են բնիկ երևանցի, որոնք բռնազաղթով բերվել են Պարսկաստան, Շահ Աբբասի կողմից՝ 1605 թվին։ Հոր անունը եղել է Թորոս, իսկ մոր՝ Գոհարազիզ։ Ոսկան ունեցել է երկու երեք եղբայրներ՝ Հովհաննես և Ավետիս։

Նախնական կրթությունը ստանում է տեղի ծխական դպրոցում. ուսման ժամանակ սաստկանում է նրա մեջ, և այդ պատճառով ծնողներից ծածուկ գնում է սովորելու հաշատուր վարդապետ Կեսարացու նոր հիմնած դպրոցում։ Ծնողները փորձում են Ոսկանին արգելել սովորելը, նպատակ ունենալով առևտրական դարձնել իրենց որդին, բայց չեն հաջողվում։ Որովհետև Ոսկան «յաւէտ տոշորմամբ ըղձայր կարգին և ուսման» և այդտեղ սովորում է ըստ ժամանակի սովորության Սաղմոս, Շարական, և Ս. Գրոց մեկնություն ընդհանրապես։

Խաշատուր Կեսարացի։ Մովսես Տաթևացի 1627 թվին Շահ Աբբասի կողմից նշանակվում է Լուսարարապետ Մայր Աթոռ Ս. էջմիածնի,



Ոսկանյան Աստվածաշնչի տիտղոսաթերթը

իր ցուցաբերած կարևոր ծառայության համար (մոմ սպիտակացնելու միջոց)։ Մովսեսն ևս իր կարգին Ս. էջմիածին է հրավիրում Սպահանցի հաշատուր վարդապետին, և երբ Մովսեսն կաթողիկոսական գահ է բարձրանում 1629-ին, հաշատուրին և Սիմոն Զուղայեցուն ուղարկում է Լեհաստան՝ տիրահույակ Նիկոլի խոովությունները մեղմելու նպատակով։

1629 թվականին Մովսեսն կաթողիկոս Սպահան է գնում Շահ Աբասին հաջորդող Շահ Սաֆին շնորհավորելու համար, և վերադարձին իր հետ Մայր Աթոռ է բերում Ոսկանին, որ դեռ մի պատանի էր։

հաշատուր Կեսարացի և Սիմոն վարդապետ կարճ ժամանակից վերադառնում են Լեհաստանից Ս. էջմիածին, և պատանու Եռանդով աշակերտում՝ Լիմ անապատի ամենից զարգացած վարդապետներից մեկին՝ Մեղքիսեթ Վառնուցուն։ Ոսկան զրկվում է Մեղքիսեթի գիտությունից Երևանում լինելուն պատճառով։

Կեսարացի դարձյալ Նոր Զուղա Առաջնորդություն է հրավիրվում և իր հետ է տանում Սիմոնին և Ոսկանին։ Այստեղ Ոսկան Սիմոնից առնում է այն գիտությունը, որ նա ստացել էր Մեղքիսեթին աշակերտելով Ս. էջմիածնում։

Ոսկան էջմիածնում։ Փիլիպպոս Ս. Աղբակեցու օրով (1633—1655) Ոսկան մասնավոր նամակով Մայր Աթոռ է հրավիրվում մոտավորապես 1634 թվականին։ Ոսկանի ուսումնական կյանքում մի անկյունադարձ է տեղի ունենում, Ս. էջմիածնում պատահելով կաթողիկ վանական Հ. Պողոս Պիրոմալուն «յոյժ կիրթ յամենեսեան ուսմանս իմաստասիրութեան»։ Ոսկան հրապուրվում է Պիրոմալու գիտությունից ու աշակերտում նրան, սովորելով, ըստ իր վկայության՝, լատիներեն, բնաբանություն, իմաստասիրություն, աստվածաբանություն, աստղաբաշխություն և երկրաչափություն։ Եվ փոխադարձաբար նրան սովորեցնում է հայերեն լեզու։ Վստահաբար Պիրոմալին հայերեն գիտեր, այն սովորած լինելով Հռոմի պրոպականտայի դպրոցում։ Ոսկան փորձում է նրա գիտեցածը մաքրել ու կոկել։ Ոսկան չի կարողանում սակայն, Պիրոմալու հայերենի թերությունները վերացնել։ Ոսկան լատիներենից կատարած իր թարգմանությունների մեջ, չի կարողանում պահել զրաբարի հարազատություն։ Այդ հարցում Մայր Աթոռի միաբանների և նույնիսկ կաթողիկոսի կողմից Ոսկանի դեմ դժգոհության գանգատներ են հարուցվում։

¹ «Պատմություն», Ա. Դավրիժեցի, ԺԷ գլուխ, 1669, Ամստ.

Ոսկան վարդապետ այս շրջանին է, որ լատիներենից թարգմանում է զանազան աղոթքներ՝ «Գիրք մտածական աղոթից», տրամաբանության մի դասագիրք և լատիներեն քերականության մի գիրք։

Մատթեոս սրկ. Մարեցի։ Թողնենք մի առ ժամանակ Ոսկան վարդապետի կենսագրությունը և ծանոթանանք Աստվածաշնչի տպագրության գործին սկսող, երախտավոր Մատթեոս Մարեցու գործունեության։


Հակոբ Դ Զուղայեցի կաթողիկոսի (1655—1680) հրահանգով նա գնում է Եվրոպա, Աստվածաշնչի տպագրության նպատակով 1656 թվականին։ Նա եղել է քարտուղարը Փիլիպպոս կաթողիկոսի և լավ գծագրող։ Ենթադրվում է որ Մարեցի հառաջացյալ տարիքում Եվրոպա ուղևորված լինի։ Նա նախ գնում է Վենետիկ, ապա Հռոմ, իզուր հույս ունենալով, որ Պապը և կարդինալների ժողովը իրեն կօգնեն։

Մարեցի Հռոմից հիասթափված Ամստերդամ է մեկնում, անպայման իր գործը իրականացնելու հավատքով։

Ամստերդամում Մարեցուն հաջողվում է տպարան հիմնել, տառատեսակների ձևման գործը հանձնում է Քրիստոֆոր Վան Դեբին։ 1660 թվականին տպագրում է Շնորհալու «Յիսուս Որդի»-ն, և գործը հազիվ կեսին հասած, Մատթեոս հիվանդանում է և տնկողին ընկնում։ Մինչ այդ նաև ընկել էր ծանր պարտքերի տակ։ Պարտատերերը հոգեհո հրեշտակների նման սնարի շուրջ են հավաքվում՝ պահանջելով իրենց փողերը և ի հարկին տպարանի փակումը։ Երկնային տնօրինությունյամբ, կարծեք զուգահեռվում է ներկայությունը այդ օրերին Ամստերդամում Ղլիճենց Ավետիս Զուղայեցու։ Մարեցու տպարանը փրկվում է փակվելու վտանգից, Ավետիս համաձայնվում է ընկեր դառնալ մահամերձ Մարեցու տպարանին, այն պայմանով, որ այն կոչվի Ս. էջմիածնի և Ս. Սարգսի անվամբ և հասույթը հատկացվի էջմիածնին և Ս. Սարգսին։ Մարեցին մահանում է 1661 թվականին։ Ավետիս՝ եղբայրն էր Ոսկան վարդապետի, մնում է առանձին, անճակած, չլինելով զրազետ և ոչ էլ ծանոթ տպագրական ու սրբագրական գործին։

Երկու ամիս պարապ մնալուց հետո, մեծ դժվարությամբ շարունակում է «Յիսուս Որդի»-ի տպագրությունը, որի մասին Հիշատակարանում ասում է. «Անճարութեան սկսայ մնացեալ ՄԻ տետրն, տպագրեցի վախելով։ Այսպէս սրբայգրեցի, օրինակն եղի մի կողմ, տպագրածն մի կողմ, մին կու նայի

² «Յիսուս Որդի», 1660, Ամստերդամ, Հիշատակարան։



Ուշի Ս. Սարգիս եկեղեցու ավերակները (Աշտարակի շրջան)

օրինակն, մի ի տպագրածն, յորժամ որ սխալ լինէր կու մեկնի: Այսպէս սրբագրեցի մընացեալ ՄԴ տետրն ապա՛յ ուսայ ըզսորայ-գրելն որ դուրին էր»:

Ղիճենց Ավետիս շարունակում է իր տպագրական գործը, և 1661-ին տպագրում է մի «Ժամագիրք», իսկ էջմիածնից հետագայում Ոսկան վարդապետի ջանքերով ուղարկված իր աշակերտը՝ Կարապետ վարդապետ Անդրինացու հետ տպագրում է մի Սաղմոս՝ 1662 թվականին:

Ուշի վաճֆից դեպի Եվրոպա: Ոսկան Երեւանցի վարդապետ 1662 թվականին թողնելով Ուշի վանքի վանահայրության պաշտոնը, Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի հրամանով և իր եղբոր Ավետիսի թախանձանքին որպէս պատասխան, մեկնում է Եվրոպա՝ Աստվածաշնչի տպագրության այնքան ցանկալի երազը իրականացնելու մտադրութեամբ:

Նախքան մեկնելը Ոսկան վարդապետ վերցնում է իր հետ կաթողիկոսի կողմից հավանության արժանացած Աստվածաշնչի ձեռագիր մի օրինակ, օգտագործելու համար տպագրության պարագային, այն օրինակը, որի վրա Մ. Աթոռում աշխատել էին և նույնիսկ «գլխատել և տնատել»:

Ըստ 1665 թվականին տպագրված Շարակնոցի հիշատակարանին, Ոսկան Լիվոռնոյում (Իտալիա) իր նշքոր՝ Ավետիսին է պատահում, որ գնում էր Զմյուռնիա, նրանից ստանձնում է տպարանը հատուկ ստորագրութեամբ և անմիջապէս իր աշակերտ Կարապետ վարդապետին գրում է, որ տպարանը օգտագործեմ էին՝ և իր ժամանումը կհասանելով:

Ոսկան վարդապետ մի քանի անգամ Լիվոռնո—Հռոմ գնալով-գալով ժամանակ է վատնում, մտադիր լինելով տպագրական գործը և հատկապէս Աստվածաշնչի տպագրութունը սկսել Հռոմում, հուսալով օգնութունը նաև կաթողիկ եկեղեցու: Անկարելի է լինում տպարանը Ամստերդամից մի այլ տեղ շարժելը: Դրա փոխարեն, սակայն, կարողանում է գտնել երեք աղնիվ հայ վաճառականներ, որոնք հանձն են առնում Աստվածաշնչի տպագրության ծախսերը հոգալ, պայմանով, որ վաճառումից գոյացած գումարից ստանան իրենց հատկացումը և մնացած շահը բաժանեն Ս. էջմիածնի, Երուսաղեմի և Ուշի վանքերի միջև: Այդ երեք աղնիվազարմ առևտրականներն էին՝ Ստեփաննոս Խոնենց, Թեոդորոս Քթոնշենց և Պետրոս Տեր Ավագենց:



Չորս Ավետարանիչները (Ոսկանյան Ատոկաճաշունի)

Ոսկան Ամստերդամում: Ղլիճենց Ավետիսի Ամստերդամից հեռանալուց հետո, Կարապետ վարդապետ շարունակում է տպագրական գործը՝ «Շարականոցի» հրատարակության սկսելով, որի համար շատ արագ կերպով խաղեր է փորագրել տալիս: 1664 թվականի ավարտին Ոսկան Երևանցին վերջապես հասնում է Ամստերդամ և անմիջապես ձեռնարկում գործին, ճոխացնում է տպարանի գիրերը և ավարտին հասցնում «Շարականոց»-ի տպագրությունը, որ մինչև համբարձման օրհնության մասը տպագրվել էր մինչև իր դալը:

Ոսկան վարդապետ, Աստվածաշնչի տպագրության որպես նախափորձ, տպում է Այբբենարան, որին միացնում է նաև մի «Քրիստոնեական»։ Այս զույգ տպագրությունները կարծեք ինքնաքննարկման համար եղած փորձեր էին, թե՛ ճաշակի և թե՛ տպագրության արվեստին լավապես ծանոթանալու համար:

Ոսկան վարդապետի օրով կրոնական հրատարակությունների կողքին նաև տպագրվում են աշխարհիկ գրքեր՝ Այբբենարան, Դավրիժեցու «Պատմություն»-ը, Խորենացու «Աշխարհացոյց»-ը և առականների մի հավաքածու՝ «Աղուէսագիրք» անունով, «Քերականություն» և այլն: Դրանցով Երևանցի նպատակ է ունեցել հայ գրքի սերը տարածել հայ ժողովրդի բոլոր խավերի մեջ անխտիր:

Երևանցի վարդապետ, Ամստերդամում հրատարակում է 17 անուն գիրք՝ չորս տարվա ընթացքում³, որոնցից ամենից կոթողականը Աստվածաշունչն է հանդիսանում:

Աստվածաշունչը: Ոսկան վարդապետի մեծագույն երազը, իր թափառումների և տառապանքների վերջնական նպատակը եղել էր տեսնել Աստվածաշունչը հրատարակված իր իսկ ձեռքով: Հազիվ Ամստերդամ հասնում է, տպագրական մի քանի փորձեր կատարելուց հետո ձեռնարկում է հրատարակել Աստվածաշունչը: Սալմաստեցի կաթողիկոսից սկսած, բոլոր հաջորդ հայրապետների տենչանքը, ահա, մարմին էր առնում: Աստվածաշնչի տպագրության գործը սկսվել է 1666 թվականին և հոգնաշան երկու տարիների ընթացքում վերջապես 1668 թվականին իրականացել: Ո՞վ գիտե ինչպիսի հոգեկան բավարարությամբ է լցվել գործի ավարտին Ոսկանը:

Ոսկանյան Աստվածաշունչը ունի 1470 մեծադիր երկայունակ էջեր, 150 նկարներով, լավագույն թուղթի վրա է տպագրված, որի մասին Լեո իր «Հայկական տպագրություն» գրքի 268-րդ էջում հետևյալ դրվատանքի

խոսքերն է ասում. «Հայերէն Աստուածաշունչը տպագրվեց երկու տարուայ ընթացքում. նա մտավ մամուլի տակ 1666-ին և դուրս եկաւ 1668-ին: Ի նկատի ունեալով այն ժամանակվայ տպագրական գործի գրութիւնը, բայց մանաւանդ այն հանգամանքները, որոնց մեջ գործում էր Ոսկանը օտար հողի վրա, մենք չենք կարող չը զարմանալ այդ արագութեան վրայ: Էջմիածնի անունը կրող տպարանից դուրս եկած Աստուածաշունչը կարելի էր համարել էջմիածնի հրատարակութիւն»:

Ոսկանյան Աստվածաշնչի զարդերն ու նկարները դժբախտաբար հայկական չեն: Բացի գրքերի սկզբի առաջին տողի բառերից, որոնք թույնագիր են և հավանաբար հեղինակի ձեռքով իսկ գծված որպես նմուշներ: Նկարները մեծ մասամբ ժամանակի հայտնի նկարիչ Ալպրեխտ Դյուրերին են, իսկ փորագրությունները Քրիստոֆել Վան Սիխեմին: Շատ հավանաբար Աստվածաշունչի նկարները նախապես գոյություն ունեցել են և օգտագործվել այլ տպարաններում, և որպես պատրաստի գործեր և թերևս տպագրության ընթացքը չկասեցնելու մտադրությամբ օգտագործվել են Ոսկանի կողմից ևս:

Անդրադառնալով Ոսկանի Աստվածաշնչի խմբագրության ըսենք հետևյալը, որ նա երկար ժամանակ աշխատանք է թափել թե՛ որպես տպագրող և թե՛ որպես խմբագրող նրա վրա: Համեմատել է հայերեն Աստվածաշունչը լատիներենի հետ, և համաձայն լատիներեն Վուլկաթայի տեստել է այն, կազմել հատուկ անունների մասնամասն մի ցանկ, նույնիսկ Սիրաքի գիրքը նորից թարգմանել է տվել Ստեփաննոս Լեհացուն, գրքի վերջում գետնել է մի քանի թարգմանություններ Ս. Հերոնիմոսից, որոնք հավանաբար իր գործերն են: Այս բոլորի վրա ավելացնենք անսխալ, մաքուր և գեղեցիկ տպագրությունը: Այս բոլորը Ոսկանի կատարած գործի մասին ճշգրիտ պատկերացում կարող են տալ մեզ Լեո հետևյալն է ասում Ոսկանի գործի մասին. «Տպագրական մամուլը առաջին անգամն էր լույս հանում այն փաստը, որ հայն էլ ընդունակ է երկար ու դաժան աշխատութիւններով խոշոր հրատարակութիւններ անել: Պակասութիւնը միայն այն էր, որ Ոսկանը չը կարողացաւ իր լատինաբանութիւններից և անհարազատ ձևերից ազատել իր թարգմանութիւններն ու բացաարութիւնները»⁴:

Եզրակացնելով ասենք, որ Ոսկան վարդապետի Աստվածաշունչը դարեր շարունակ

⁴ Լեո՝ «Հայկական տպագրութիւն», Թիֆլիս, 1904, էջ 268:

³ Լեո՝ «Հայկական տպագրութիւն», Թիֆլիս, 1904:

մնացել է տիպար մի գործ թե՛ ընթերցողների, թե՛ հետագա ուսումնասիրությունների և թե՛ նոր տպագրողների համար:

Ոսկանյան հրատարակություններ: Չորս տարվա ընթացքում 17 անուն գիրք: Ահա Ոսկանի կյանքի հիմնական նպատակը: Նա այդ գրքերով փորձում էր լույս սփռել իր ժողովուրդի մտքին ու սրտին, հանձն առնելով ամենադաժան ու վատթարագույն կյանքի պայմանները: Լույսի համար զոհում էր ինքն իրեն, օր ըստ օրե հալվում էր ու մաշվում տպարանի խոնավությունն ու ծանր մթնոլորտի մեջ՝ իր ժողովուրդի սիրուն:

Հատկանշական է նկատել Ոսկանի զուտ կրոնական հրատարակությունների կողքին աշխարհիկ բնույթ ունեցող գրքերի ներկայությունը:

Հետևյալներն են Ոսկանյան տպարանի կրոնական հրատարակությունները. Շարակնոց, Աստվածաշունչ, Ժամագիրք, Մաշտոց, Քրիստոնեական, Վարդապետություն Քրիստոնեական, Գիրք աղոթից, Նոր Կտակարան, Տոմար, Շարակնոց, Տոնացույց և Սաղմոս:

Լեո հետևյալ խոսքերով դրվատում է Երեմիան. «Հերոսութիւն էր այդքան բեղմնաւոր հրատարակչական գործունեութիւն ցոյց տալը այն ժամանակներում: Շատ և շատ էին այն դառնութիւնները, որ կրում էր այս մարդը օտար երկրքի տակ, զրկուած դրամական զօրաւոր աշակցութիւնից: Բայց հերոսութիւն էլ յայտնի սահմաններ ունի. եկաւ ժամանակ, երբ Ոսկանն էլ պիտի յաղթուէր ձախորդ հանգամանքներից»:

Ոսկան չպարտվեց: Նա իր գլխավոր նպատակը արդեն իրագործել էր, քաղաքներով Աստվածաշունչը, իսկ մնացածը մի շնորհ էր աստվածային:

Ավելացել էին տպարանի պարտքերը, և Երեմիայի հասել էր սնանկության եզրին: Հրատարակությունները նյութական ապահովություն չկարողացան ընձեռել Ոսկանին:

Արեւելք ուղարկված գրքերի վճարումները չէին փոխանցվում կանոնավորապես, առաքումներ անապահով էին և վտանգավոր: Աստվածաշունչ և այլ գրքեր փոխադրող առաքատանավերից մեկը ընկղմվել էր: 1673-ին տպագրված Ժամագրքի մեջ Ոսկան հաստատում էր. «Ես շատ ստրկացայ ինձ վրայ բարձրած պարտքերի պատճառով»:

Ոսկան մի ելք է որոնում, ուզում է փրկել իր տպարանը, այդ իսկ նպատակով որոջում է հեռանալ Հոլանդայից:

Ոսկան աստանդակվեց: Ոսկան վարդապետ իր տպարանը փոխադրելու նպատակով դիմում է Լյուդովիկոս ԺԴ թագավորին, որ-

պեսզի իրեն արտոնություն ստի իրենում կամ Մարսելում տպարան հաստատել: Թագավորը արտոնում է: Ոսկան չի անդրադառնում, որ կաթոլիկ Ֆրանսիան թույլ չէր տա իրեն հրատարակել այն, ինչ որ ինք ցանկանում էր, Հոլանդա բողոքական երկիր էր և համեմատաբար ազատամիտ ու թույլատու:

Ոսկան Ամստերդամից նախ իրվոռնո է գնում, վստահաբար նոր բարերարներ ճարելու և տպարանը անցուկ վիճակից փրկելու նպատակով: Դժվար էր նրա համար շարունակել իր հրատարակությունները իրվոռնոյում: Պապական գրաքննությունը թույլ չէր տալիս նրան:

Իրվոռնոյում 1670-ին Ոսկան հագիվ երկու գրքուկներ կարողանում է տպագրել, առաջինը՝ «Վարդապետութիւն քրիստոնեական» Ռոբերտոս Բելլարմինոսի և երկրորդը՝ «Պարտէզ հոգևոր» Հովհաննես Հոլովի թարգմանությունը: Երկու ծայրահեղ լատինադավան գրքեր, որոնք հայ հասարակության կողմից ընդունելություն չգտան: Միթե կարելի է երևակայել, որ Ոսկան առանց պարտադրանքի տպագրած լիներ դրանք: Պետք է մոռանալ, որ վերոհիշյալ զույգ գրքերը տպագրվել էին «հրամանաւ Մէծաւորաց», այսինքն՝ կաթոլիկ գրաքննիչների պարտադրանքով:

Ոսկան իրվոռնոյից քիչ ժամանակ անց փոխադրվում է Մարսել, գործը նոր հույսերով վերսկսելու նպատակով: Բայց վերստին նյութական կարիքները ճնշում են իր հոգու վրա, ու կապում ձեռքն ու միտքը: Չկան օգնության աղբյուրներ, ցամաքել են հույսերը, միայն ոմն Թադեոս քահանա Համադասպյանն է իրեն հույս տալիս, տարօրինակ խոստումներով, տպարանի գործի ընկերակցություն առաջարկելով: Ոսկան ելք չունի, հետևյալ պայմաններով համաձայնվում է: Յուրաքանչյուրը գործի սկզբին տրամադրելու էին 1000 դահեկան, դիրքերը սրբագրելու իրավունքը Ոսկանին էր, և որպես վարձք այդ աշխատանքի համար տպված գրքերից ստանալու էր 350-ական օրինակ, իսկ մնացյալ շահը երկուսն էին բաժանելու հավասարապես: Այսպիսով Ոսկան դեռ ևս տպարանի տիրությունը իր ուսերի վրա էր առած:

Մարսելում Ոսկանին նորանոր դժվարություններ են սպասում: Մարսելի եպիսկոպոսը հոռմեական դավանության գիր է պահանջում Ոսկանից, լեհացի հայատյաց բարոզիչ Փեթուի դրդումով: Եպիսկոպոսը իր փոխանորդին է հանձնում Ոսկանի տպարանը, Հոռմից հայ քահանա է հրավիրվում տպվելիք դիրքերը մանրամասնորեն զննելու և սրբագրելու համար: Այս բոլոր հոգեմաշ գործերի մեջ Թադեոս քահանայի շարագուշակ ներկայությունը նկատվում է: Նա շատ կանու-

5 Լեո՝ «Հայկական տպագրութիւն», Թիֆլիս, 1904:

խից՝ 1668 թվականից սկսած Ոսկան վարդապետի տպարանում էր և փորձում էր քայքայել լույսի մի օջախ, կաշառված լինելով: Կյանքի օրինաչափությունն է դա, կարծեք, անպայման Հիսուսի կողքին, ստվերի մեջ, երևում է Հուդան:

Ոսկան տոկաց, հավատարիմ մնաց իր եկեղեցուն և Ս. էջմիածնին, շարունակեց կոչել տպարանը Ս. էջմիածնի անունով: Մարտնչում նա կարողացավ տպագրել (1673-ին) «Գրքուկ կարևոր», իսկ ժամագիրքը և նարեկացու «Մատենան ողբերգութեան»-ը մնացին կիսատ:

Վախճան Ոսկանի: Տառապագին մի կյանք վարելուց հետո, երկրային մտահոգության բոլոր բեռները իր ուսից գցեց աշխարհին և գծուծ մարդկանց, և ինք իր գործով ևս առավել սրաքացած, գեղեցկացած, նվիրագործված անունով բաժանվեց կյանքից Մարտնչում, վաթսուն տարեկան հասակում, 1674 թվականի ցուրտ ձմեռան: Դամբան շունի նա. միթե անմահներին արժան է մի բուռ հող, ոչ, նրանք սիրում են ապրել կենդանի մարդկանց առօրյային մեջ, սրտի ու մտածմունքի մեջ:

Ճշմարտացի է Լեոն, որ ասում է. «Եթե անպատճառ հարկավոր է, որ յուրաքանչյուր նոր գործ ունենա իր զոհերը, մենք Ոսկան վարդապետին կարող ենք համարել ամենախոշոր զոհը, որ ստանում էր տպագրական գործը հայերից: Այդ մարդու ութամյա կյանքը նվիրված էր ցույց է տալիս, թե որքան շատ բան կարող էր անել նա, եթե զոհի վիճակին չենթարկվեր: Նա առաջին հայ մարդն էր, որ կանոնավոր ու հարատև դրություն ստեղծեց տպարանի համար, նա առաջին հայ հրատարակիչն էր, որ ուներ համեմատաբար շատ լայն հայացք իր գործի վրա, որ գիրք տալիս էր ոչ միայն տիրացուին, այլ և վաճառականին, հասարակ ընթերցողին: Առաջին անգամ հայերեն Աստվածաշունչ տպագրող մարդը կարող էր դեռ շատ հսկայական ու դաժան աշխատասիրություն մտցնել իր լուսավոր գործի մեջ, տալ ուրիշ մեծ գործեր էլ: Բայց նա մենակ էր, համարյա զուրկ նյութական միջոցներից և, որ ամենից վատն է, ճնշված անիրավ հսկողությունների և կասկածների տակ... Ոսկանը զոհ էր: Զոհ հայ-

րենի տգիտության և խավարի, զոհ իր զարմանալի եռանդի, որ ոչ մի կողմից աջակցություն չէր ստանում, և վերջապես՝ զոհ ընտանի մատնիչի, որ սպանեց նրան կաթոլիկ հավատաքննության ձեռքով:

Որքան և ցավալի լինի զոհը, ինքն ըստ ինքյան, բայց նրա մեջ միշտ մարմնանում է մի գաղափարի հաղթանակ, նրանով մի հայտնի գործ արժատանում է ավելի հաստատ ու պտղատու հողի մեջ: Այսպես էր և Ոսկանը: Նա մեռավ վշտերի և հուսահատության մեջ, բայց հայ տպարանը արդեն մի հաստատություն էր դարձել և այլ ևս կորչելու, անհայտանալու վտանգի մեջ չէր: Ճիշտ է, նրա տպարանը մաս-մաս եղավ, ցրվեց, բայց այդ բեկորները նոր և նոր տպարանների կորիզներ դարձան Մարտնչում, Ամստերդամում, Վենետիկում, Կ. Պոլսում: Ոսկանը պատրաստեց հոծ տպագրիչների սերունդ, որ նրանցից հետո շարունակեց գործը և այնքան եռանդոտ ու ժիր էր, որ նույն իսկ շարունակեց նաև նրա կոիվը»⁶:

Այսօր, երեք հարյուր տարի վերջ ոսկանյան տպարանի գործունեությունից, որքան փոխված է պատկերը հայ տպագրության, բազմահարյուր հատորներ են լույս տեսնում ամեն տարի մեսրոպյան տառերով թե՛ հայերենից և թե՛ հայկական գաղթօջախներում: Արդյոք Ոսկանը՝ հայ տպագրության ռահվիրան ու նահատակը, չի ցնծում տեսնելով այս բոլորը: Թավալվեք տպագրության մամուլներ, թավալվե՛ք ու երգեցեք ձեր հանկերգը, որ սիրելի է մեծ վարդապետին:

Ոսկանի արժանիքը մեծ է նաև հատկապես Աստվածաշնչի առաջին հրատարակիչը լինելու հանգամանքով: Մնաց այդ գործը անգերազանցելի: Ո՞վ արդյոք այսօր մեր ժողովուրդին պիտի տա աշխարհաբար տպագրությունը Աստվածաշնչի:

Խոսքը գործի պետք է վերածվի, ծրագրերը թող կիրառվեն, և արդի մեր աշխարհաբար լեզուն ևս թող թագադրվի Աստվածաշնչի ընտիր թարգմանությամբ: Քսաներորդ դարի հայր ևս ծառավոն ունի Աստվածաշնչի խոսքին:

⁶ Լեոն՝ «Հայկական տպագրություն», Թիֆլիս, 1904:

